ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Սույն թվականի մայիսի 24-ին, կիրակի օրը, Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պաշտոնական հրավերով, Ազգիս Սրբազնագույն Հայրապետը ուղևորվեց Մոսկվա՝ մասնակցելու Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված նիստին, որ նվիրված էր վերջերս Ստոկհոլմում գումարված հոբելյանական սեսիայի արդյունքներին և ՍՍՌՄ խաղաղության կողմնակիցների խնդիրներին։

Մայիսի 24-ն է, Հայաստան աշխարհի արևոտ օրերից մեկը։ Այսօր Մայր Աթոռը իր ողջ անձնակազմով սովորականից շուտ է արթնացել և պատրաստության մեջ է՝ բարի ճանապարհ մաղթելու իր շատ սիրելի Հայրապետին։

Երևանի օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։ Օդանավակայանում են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Երևանի քահանայական դասը և Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, թեմական ու եկեղեցական խորհուրդների անդամները՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի գլխավորությամբ, և բավական մեծ թվով հավատացյալներ։ Տեղական ժամանակով ժամը 8.15-ին ինքնաթիռը կտրվում է Մայր Հողից և ուղղություն վերցնում դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Մոսկվա։ Երեկոյան ժամը 5-ին վայրէջք ենք կատարում մեծ մայրաքաղաքի օդանավակայանում։

Մայիսի 26-ին, երեքշաբթի օրը, առավոտյան պաշտոնական այցով Վեհափառ Հայրապետին է այցելում Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի գլխավոր քարտուղար պր. Կոտովը և հայտնում Նորին Սրբությանը ժողովի ծրագրերի մասին։ Նույն օրը, հետ ճաշու ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, առաջնորդվում է դեպի Արվեստի աշխատողների տունը, որտեղ բացվում է Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված նիստը։ Նախագահության սեղանի շուրջը, նախագահի աջ կողմում, տեղ է հատկացվում Ազգիս Սրբազնագույն Հայրապետին և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, գիտության գործիչների, գրողների, հասարակական գործիչների և արտասահմանյան պատգամավորության ղեկավարների։ Հսկա դահլիճի բոլոր աթոռները գրավված են. Սովետական անծայր Հայրենիքի լավագույն ուստերն ու դուստրերը այդ գեղեցիկ դահլիճի կամարների տակ են հավաքվել՝ իրենց և իրենց ժողո-

վուրդների ձայնը լսելի դարձնելու համար, հանուն խաղաղության։ Սովետական ժողովրդի ընտրյալ պատգամավորների շարքին դահլիճում նստած են նաև Ամերիկայի խաղաղության կողմնակիցների խորհրդի, Անգլիայի, Կանադայի, Վիետնամի, Ճապոնիայի, Իրաքի և այլ երկրների պատգամավորներ։ Միևնույն դահլիճում և միևնույն սեղանի շուրջը քով-քովի են եկել տարբեր դավանությունների, համոզմունքների տեր տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ՝ միահամուռ կերպով պաշտպանելու համար աշխարհի և մարդկանց կյանքի խաղաղությունը։ Նախագահող հայտնի գրող Տիխոնովի կարճ բացման խոսքից հետո, խոսքը տրվում է Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Նախագահության անդամ, Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահի տեղակալ ակադեմիկոս Ա. Ե. Կորնեյչուկին։ Նա մանրամասն ծանրանում է խաղաղության կողմնակիցների տասը տարվա գործունեության վրա և խոսում այն մասին, որ խաղաղության կողմնակիցների շարժումը էֆեկտիվ կերպով սկսվել է տասը տարի առաջ և այս անցած տարիների ընթացքում խաղաղության կողմնակիցները ունեցել են իրենց զոհերը, բայց և այնպես խաղաղության կողմնակիցների անպարտելի բանակը ավելացել է խաղաղության նոր մարտիկներով։

Հանդիսավոր նիստում իրենց հեղինակավոր խոսքն են ասում Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գլխավոր պրեզիդենտ, անգլիացի ականավոր գիտնական պրոֆ. Ջոն Բեռնալը, ՀԱՄԿԽ-ի քարտուղար Լ. Ն. Սոլովյովը, Սովետական գիտնականների անունից՝ Նոբելյան մրցանակի լաուրեատ Ն. Ն. Սեմյոնովը, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը, Վիետնամի և Ճապոնիայի խաղաղության կողմնակիցների պատվիրակությունների ղեկավարներ Լե-Դին-Տամը, Տոգո Կապայասին և շատ ուրիշներ։

Նիստի երկրորդ մասում խոսքը տրվում է Վեհափառ Հայրապետին։ Նորին Սրբությունը, հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, հավատացյալ հայ ժողովրդի և Ս. Էջմիածնի, ռուսաց լեզվով սկսում է Իր ողջույնի խոսքը և ապա հայերենով շարունակում Իր ելույթը։ Նորին Սրբության միջոցով ներկաների առջև ներկայանում է խաղաղության տենչացող ինքը հայ ժողովուրդը։ Նա, հայ ժողովուրդը, ամենից ավելի սիրել ու փայփայել է խաղաղությունը, որովհետև ամենից շատ է տուժել պատերազմների արհավիրքներից։ Փոքրիկ, անպաշտպան մի ժողովուրդ, որ դարերի ընթացքում միշտ հոշոտվել է։ Ո՞ւմ հայտնի չէ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում միլիոնավոր անմեղ հայ բնակչության սրախողող լինելը Արևմտյան Հայաստանում, ո՞վ կարող է մոռանալ երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ հարյուրավոր քաղաքներ ու դրախտանման գյուղեր հողին հավասարվեցին, մշակույթի անկրկնելի կոթողներ կործանվեցին, անթաղ ու անշիրիմ մնացին միլիոնավոր դիակներ։ բանականություն ունեցող ո՞ր մահկանացուն կարող է մոռանալ, որ երկրորդ համաշխարհային պատերազմը միլիարդների հասնող նյութական վնասներից բացի, մարդկությանը զրկեց աշխարհում ամենաթանկագինից՝ ծաղիկ երիտասարդությունից։ Դեռ մինչև այսօր մայրերը ողբում են իրենց մատաղ որդիների կորուստը, որոնք մեռան, որպեսզի է՛լ երբեք ու երբե՛ք աշխարհի մայրերը այլևս առիթ չունենան արտասուք թափելու։ Նորին Սրբությունն Իր խոսքը վերջացնում է կոչ անելով աշխարհի երկու մեծ պետությունների՝ Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ղեկավարներին՝ հանդիպման և բանակցությունների միջոցով լավագույն կերպով լուծում տալու խաղաղության վերաբերյալ հարցերին։

Նիստի վերջում խոսքը տրվում է Սովետական Միության Խաղաղության կողմնակիցների պատասխանատու քարտուղար Մ. Ի. Կոտովին, որը շնորհակալություն է հայտնում ելույթ ունեցողներին և բուռն ծափահարությունների տակ հայտարարում է, որ Ստոկհոլմի Խաղաղության Համաշխարհային Խորհուրդն իր վերջին հոբելյանական սեսիայում պարգևատրել է շքանշաններով մի խումբ սովետական խաղաղության կողմնակիցների, որոնք առավել աչքի են ընկել որպես խաղաղության և ժողովուրդների բարեկամության ճշմարիտ կողմնակիցներ, և որոնք իրենց գրչով, խոսքով ու գործերով նպաստել են խաղաղության դատին։ Պարգևատրվողների թվումն է նաև Ամենայն Հայոց խաղաղասեր Հայրապետը, որն առաջին դիրքերում է գտնվել խաղաղության պաշտպանության պայքարը սկսելու առաջին իսկ օրերից, երբ դեռ առաջնորդն էր ռումինահայ թեմի։ Վեհափառ Հայրապետից բացի, մեր ժողովրդի տաղանդավոր զավակներից երկուսը՝ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն ու Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը ևս արժանացել են այդ բարձր պարգևին։ Դահլիճում ներկաները բուռն օվացիայով են ընդունում մեր ժողովրդի լավագույն զավակների անունները, որոնց

քրտնաջան աշխատանքը գնահատվել է Խաղաղության Պաշտպանության Համաշխարհային մշտական կոմիտեի կողմից և այսօր նրանց կրծքերը զարդարվում են շքանշաններով, որպես լավագույն բարեկամները ողջ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների։ Պր. Մ. Ի. Կոտովը ջերմորեն շնորհավորում է պարգևատրվողներին և ցանկանում, որ նրանք է՛լ ավելի պայքարեն խաղաղության համար, որից և կախված է աշխարհի ժողովուրդների կյանքը և երջանկությունը։

Խորհրդակցությունը մոտենում է իր ավարտին։ Ընդունվում է համապատասխան որոշում՝ բարձր մակարդակով խորհրդակցություն հրավիրելու՝ «սառը պատերազմ»-ի վերացման համար։ Խորհրդակցությունից հետո տրվում է ճոխ համերգ մայրաքաղաքի արվեստի աշխատողների լավագույն ուժերով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հինգշաբթի, մայիսի 28-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետի, պաշտոնական այցելություն տվեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին։ Երկու Հայրապետները գրկախառնվում ու համբուրվում են։ Ապա տեղի է ունենում եղբայրական ու սիրալիր զրույց։ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը խոստում է այն մասին, թե Ինքը տեղյակ է Նորին Վեհափառություն Վազգեն Հայրապետի շինարարական ու դաստիարակչական ծրագրերի և գործունեության մասին և հայտնում է Իր խնդակցությունը և բարեմաղթությունները։ Սիրալիր մթնոլորտում տեղի ունեցած զրույցը վերջանում է Նորին Վեհափառության հրաժեշտի խոսքերով, քաջառողջություն և հաջողություն մաղթելով Պրավոսլավ Եկեղեցու Պետին և կրկին ողջագուրվելով հրաժեշտ առնում նրանից։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐԴՈՒՄ Է ԻՐ ՃԱՌԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. Ա. Ա. ՊՈՒԶԻՆԻՆ

Ուրբաթ, մայիսի 29-ին, ցերեկվա ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Մոսկվայի հոգևոր հովիվ հոգեշնորհ

Տ. Պարգև վարդապետ Գևորգյանի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, պաշտոնական այցելություն տվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ պր. Ա. Ա. Պուզինին։ Խորհրդի շենքի շքամուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորում է նույն խորհրդի պատասխանատու աշխատակից պր. Սոլովյովը։ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ընդունելության պաշտոնական սրահը, որտեղ խորհրդի նախագահ պր. Ա. Ա. Պուզինը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին։ Նորին Ս. Օծության և պր. նախագահի միջև տեղի ունեցավ զրույց, որից հետո Նորին Ս. Օծությունը հայտնեց Իր շնորհակալությունը և հրաժեշտ առավ պր. նախագահից։

ՇՎԵԴԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Ուրբաթ, մայիսի 29-ի երեկոյան ժամը 20.30-ին, Մոսկվայի «Ուկրաինա» հյուրանոցի սրահներից մեկում, տեղի ունեցավ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի և շվեդական բողոքական եկեղեցականների պատգամավորության։ Ընդունելությունը կազմակերպել էր Ռիգայի և համայն Լատվիայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը։ Ընդունելությանը ներկա էին նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներ և Պատրիարքարանին կից արտաքին հարաբերությունների պաշտոնյաները։ Ընդունելությունից տասնըհինգ րոպե առաջ, Ռիգայի և համայն Լատվիայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը այցելում է Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին և առաջնորդում Նրան ընդունելության սրահը։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։ Ռիգայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը հյուրերին ներկայացնում է Վեհափառ Հայրապետին և սկսվում է սիրալիր խոսակցություն Հայոց Եկեղեցու Պետի և ներկաների միջև գերմաներեն լեզվով։ Կարճատև զրույցից հետո, ներկաները հրավիրվում են ճոխ բարիքներով բեռնավորված սեղանի շուրջ։ Առաջին կենացը առաջարկվում է Հայոց Եկեղեցու և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կենացը։ Երկար ժամանակ ամբողջ սեղանի շուրջ խոսակցության առարկան է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Ս. Էջմիածինը։ Ներկաները խորին շնորհակալություն են հայտնում Լատվիայի արքեպիսկոպոս գերաշնորհ Գուստավ Տուրսին, որ այնքան սիրալիր կերպով կարգադրել էր այս հանդիպումը Ամենայն Հայոց Հայրապետի հետ։ Ապա առաջարկվում են բաժակներ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պետի, Ռիգայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսի և հյուրերի կենաց։ Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և Իր գոհունակությունն ու ուրախությունն է հայտնում արքեպիսկոպոս Գուստավ Տուրսին՝ Իր կազմակերպած այս ընդունելության համար։ Ապա Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրում է Ս. Էջմիածնի պատկերով արծաթյա ափսեներ և Իր մակագրությամբ Մայր Տաճարի պատկերներ։ Ներկաները խորին շնորհակալություն են հայտնում Հայոց Հայրապետին թանկագին նվերների համար։ Վերջում Վեհափառ Հայրապետը արքեպիսկոպոս Գուստավ Տուրսին և շվեդացի բարձրաստիճան եկեղեցականներին հրավիրում է այցելել Սովետական Հայաստան և Ս. Էջմիածին։ Գիշերվա ժամը 12-ին ընդունելությունը վերջանում է և ներկաները հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից անմոռանալի տպավորություններով։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 31-ի, կիրակի, Մոսկվայի հայ գաղութի համար հիշատակելի օր է, որովհետև մայրաքաղաքի հայկական գաղութը ապրեցավ այն երջանիկ օրը, որին շատ վաղուց էր սպասում։ Մոսկվայի Հայոց Եկեղեցին լեփ-լեցուն էր հայերով, որոնք մայրաքաղաքի տարբեր ծայրերից շտապել էին հայոց եկեղեցի՝ դիմավորելու Վեհափառ Հայրապետին և համբուրելու Նրա Ս. Աջը։

Առավոտյան ժամը 12-ն է։ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Մոսկվայի Հայոց Ս. Հարություն եկեղեցին։ Եկեղեցական թափորը անցնում է ժողովրդական հսկա զանգվածի միջով։ Վեհափառ Հայրապետին մատուցվում են թարմ ծաղկեփնջեր։ Եկեղեցական թափորը, մարդկային հոսանքը ճեղքելով, անցնում է առաջ, Իր շուրջը թողնելով քուլա-քուլա բարձրացող խնկի անուշ բուրմունքը։ Նորին Սրբությունը տաճարում «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս» սաղմոսը կարդալուց, աղոթելուց ու ժողովրդին օրհնելուց հետո առաջնորդվում է ավանդատուն։

Սուրբ պատարագի հոգեպարար ժամն է։ Եկեղեցին և բակը լեփ-լեցուն են. ինչպես ասում են՝ «ասեղ գցելու տեղ չկա», ամեն

ոք աշխատում է միայն երկու ոտի տեղ ունենալ տաճարի ներսում, մասնակից լինելու Վեհափառ Հայրապետի մատուցած պատարագին և սիրեցյալ Հայրապետի հետ միասին աղոթելու աշխարհի խաղաղության, հայ ժողովրդի երջանկության և մեր Հայրենիքի ու մեր Ս. Եկեղեցու անսասանության համար։ Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Պարգև ու Տ. Եղիշե վարդապետները։ Ամեն ոք աղոթում է, հնչում են սուրբ պատարագի հոգեզմայլ երգերը, որոնց մեջ հայ հոգին է դրված։

մեջ բարոյական, ազգային և գաղափարական կյանքը, բաց անում նրանց սրտերում կրոնա-ավանդական հիշատակները։ Այսօր Մոսկվայի հավատացյալ հայությունը այս սուրբ տաճարն է եկել Ձերդ Վեհափառության առաջ սփռելու իր լավագույն զգացմունքների՝ ջերմ հավատի, սիրո և եղբայրական ուխտի խնկաբույր ծաղիկները։ Դուք, Վեհափառ Տե՛ր, եկել եք Մայր Աթոռից, հայոց Լուսո Մայր, հայ ժողովրդի հոգևոր կյանքի հաղթանակի հուշարձան Ս. Էջմիածնից, այնտեղից մեզ համար ողջույն եք բերել։ Ի՞նչը կարող է քրիստոնյա հայի հա-



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»։ Հանուն Մոսկվայի հայ գաղութի, ողջույնի և բարի գալստյան սրտագին խոսք է ասում Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը.

«Թույլ տվեք, հանուն Մոսկվայի հայ գաղութի, սրտագին ողջունելու Ձեր շնորհաբեր գալուստը մեր մեծ Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվա, Ձեր ժողովրդի, Ձեր զավակների մեջ։ Ձերդ Վեհափառության այս այցելությունը հրճվանքով է լցնում մեր բոլորի սրտերը և մի է համախմբում Մոսկվայի հավատացյալ ժողովրդին, արծարծում նրանց

մար ավելի թանկագին լինել, քան այն ողջույնները, որ բերել է Ձերդ Սրբությունը հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Մայր Տաճարից։ Այստեղ, այս սրբազան կամարների տակ հավաքված, ավանդապահ և հավատավոր հայությունը եկել է ընդունելու Ձերդ Վեհափառության բերած ողջույնները, լսելու Ձեր մխիթարիչ և հավատի կոչող խոսքերը։ Հայ հավատացյալ ժողովրդի համար միշտ էլ նվիրական են եղել Ս. Էջմիածնի անունը և նրա հետ կապված խորհուրդները, ինչպես նաև Ամենայն Հայոց Հայրապետի անձնավորությունն ու հեղինակությունը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձ-

նավորության և հեղինակության հանդեպ ցույց տրված որդիական սերն ու նվիրվածությունը իմաստ են ստացել հայ մարդու համար։ Ահա այդ է պատճառը, որ մեր ժողովրդի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ներկայացուցիչները մշտական անդամներն են խաղաղության համագումարների՝ որպես խաղաղության ջերմ կողմնակիցների և պաշտպանների։ Վեհափառ Տե՛ր, Դուք, որպես հայ ժողովրդի հայրենասեր զավակի, մեր Հայրենիքի վերածնության, ծաղկման և բարօրության գործին նվիրված անձնավորություն, միշտ էլ եղել եք խաղաղության պաշտպանության մարտիկների առաջավոր շարքերում։ Այսօր բովանդակ հայությունը սրտի անհուն բերկրանք է զգում իմանալով, որ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի մշտական կոմիտեն, վերջերս կայացած Ստոկհոլմի իր որոշման մեջ, Ձերդ Վեհափառությանը պարգևատրել է խաղաղության պաշտպանության շքանշանով։ Ձերդ Սրբության այդ մեծ պարգևատրումը ավելի մեծ իրավունք է տալիս Ձեզ որպես հայ մարդ, որպես մեր Ազգի Հովվապետը, խաղաղության և եղբայրասիրության հրավիրելու Սփյուռքում ցրված մեր քույրերին և եղբայրներին, հիշեցնելով նրանց հայրենասեր մեծ բանաստեղծի հետևյալ պատգամը՝

«Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկավ էինք զատված,
Բախտին ամեն ոխ չարանենգ,
Ի մի համբույր ցրվին ի բաց»։

Ձեր՝ Մոսկվա շնորհաբեր գալստյան առթիվ արտահայտելով մեր սրտաբուխ երախտագիտական խոսքը, մաղթում ենք Ձերդ Ս. Օծության արևշատություն, հոգու արիություն, ուժ ու եռանդ՝ որպեսզի իրականություն դառնան Ձեր ազգանվեր ծրագրերը՝ ի փառս Ս. Եկեղեցու և հուրախություն մեր հավատացյալ ժողովրդի. ամեն»։

Ապա ընդհանուր լռության և վեհության մեջ խոսում է Վեհափառ Հայրապետը, նախ Իր հայրապետական ողջույններն ու օրհնությունը բաշխելով բոլոր ներկաներին.

«Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, ամենայն հայոց Ս. Էջմիածնից և մեր հարազատ Մայր Հայրենիքից, մեր Արարատյան չքնաղ աշխարհից։ Վերջին օրերում Էջմիածնում և Երևանում նույնպես երկինքը ծածկված էր անձրևվաբեր ամպերով, բայց այն օրը երբ պիտի բաժանվեինք Ս. Էջմիածնից և Երևանից, երկինքը պայծառացել էր և Արարատը իր հրաշալի գեղեցկությամբ մեր առջև էր գտնվում ամբողջովին։ Եվ ահա, վեհ Արարատի գմայլելի տեսարանը Մեր աչքերում՝ եկանք Մոսկվա, այս գեղեցիկ քաղաքը, եկանք սակայն Արարատի տեսիլքով և նրա գեղեցկության և փառքի զգացումով։ Ողջո՜ւյն հավերժական Արարատից, որը սիմվոլն է մեր Հայրենիքի հավիտենականության։ Վստահ ենք, որ դուք բոլորդ, որ հավաքված եք այստեղ, Քրիստոնյա հավատացյալներ եք և լավ հայեր, և ձեր կրծքի տակ հայի սիրտ է բաբախում, չնայած հեռու եք Հայաստանից։ Ուրախ ենք, որ եկել ենք այս փոքրիկ եկեղեցին, որպեսզի միասին աղոթենք մեր հոգիների փրկության, մեր բարի գործերի հաջողության և մեր մեծ Խորհրդային Հայրենիքի վերելքի, բարգավաճման և համայն աշխարհի խաղաղության համար։

Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետից գոհ ենք, որ գեղեցիկ խոսքերով բարգմաներ եղավ ձեր բոլորիդ։ Վստահ ենք, որ այդ խոսքերը բխում էին նաև ձեր սրտերից։ Թող Աստված միշտ պահպանի և օգնի, որպեսզի այս անցավոր աշխարհում մեր խղճի պարտքը կատարենք դեպի մեր Ազգը, դեպի մեր Եկեղեցին, դեպի մեր Հայրենիքը, որը շատ դժբախտ օրեր է ունեցել մեր անցյալ պատմության շրջաններում, բայց այսօր, մոտ քառասուն տարի է արդեն, որ նա հասել է ապահովության և բարգավաճման ափին, վերածնվել է և վերակառուցվում ու կերպարանափոխվում է ամեն օր։

Եթե ուրիշ քաղաքներից ու երկրներից այցելության եկողը մեկ կամ երկու տարի վերջ կրկին գալու լինի, կտեսնի, թե որքան է ծաղկել ու անճանաչելի դարձել մեր Հայրենիքը և հայ ժողովրդի ծաղիկ քաղաք սիրուն Երևանը, շնորհիվ Խորհրդային կառավարության անդուլ ջանքերի։ Մենք բոլորս հպարտանում ենք դրանով։ Մենք էլ՝ հոգևորականներս, մեր աշխատանքի բաժինն ենք բերում, որպեսզի անցյալի կործանված և ավերակ մեր Հայրենիքը վերաշինվի ավելի շուտ, ավելի կատարյալ։ Նույն ոգևորությամբ Մենք աշխատում ենք նաև Մայր Աթոռում՝ վերաշինելու և ծաղկեցնելու համար Հայաստանյայց Եկեղեցին և Ս. Էջմիածինը, որը 1600 և ավելի տարիներ հայ ժողովրդի Սրբությունն Սրբոցն է։ Մենք մեր սրբազան պարտքն ենք համարում նորոգել ու շենացնել մեր հոյակապ տաճարները։ Մոտ երկու միլիոն հայեր այսօր ապրում են Հայաստանում, իսկ մոտ երեք միլիոն հայեր ապրում են Հայաստանից դուրս, Խորհրդային երկրի զանազան ռեսպուբլիկաներում և արտասահմանի հեռավոր հորիզոնների տակ, մինչև Ատլանտյան և խաղաղական

ՊԱ-1015

օվկիանոսների ափերին և Աֆրիկայում: Սփյուռքի այդ ավելի քան մեկ և կես միլիոն հայ ժողովուրդը միանում է իր սուրբ հավատով և պանպանում է իր մայրենի լեզուն և հայրենասիրությունը: Էջմիածինը հայ ժողովրդի հայրենասիրության կռվանն է երեկ, այսօր, միշտ և հավիտյան: Երեք անգամ ենք եղել այստեղ: Առաջին անգամ փակ էր այս եկեղեցին ու կիսավեր վիճակում, երկրորդ անգամ նոր էր բացվել. դա 1956 թվականին էր, երբ նոր էինք վերադարձել արտասահմանյան Մեր ուղևորությունից: Այս երրորդ անգամն է, որ այցելում ենք և շատ ուրախացանք, որովհետև շատ բան կտեսնենք փոխված եկեղեցու և գերեզմանատան մեջ, շնորհիվ հայր Պարգևի, խաչատուր ավագ քահանայի և եկեղեցական խորհրդի ժրաջան աշխատանքի և մանավանդ ձեր բոլորի անմիջական օժանդակության:

Սիրելի՛ ժողովուրդ. եկեղեցին ժողովրդով է եկեղեցի, նրանով է պայծառանում: Վստահ ենք, որ այսուհետև ևս յուրաքանչյուրը իր պարտքը կկատարի եկեղեցու նկատմամբ և եկեղեցական խորհուրդը, հայր Պարգևի գլխավորությամբ, հնարավորություն պիտի ունենա ավելի բարեկարգելու թե՛ եկեղեցին թե՛ գերեզմանատունը: Վստահ ենք, թե Մոսկվայի մեր հայ եղբայրներն ու քույրերը մոտ են կանգնած եկեղեցուն և կօգնեն այս սուրբ գործին: Հեռու տեղերից գալիս են Մոսկվա և այցելում ձեր եկեղեցին, գերեզմանատունը, որտեղ կան հիշատակության արժանի հայտնի հայ մտավորականների և հասարակական գործիչների շիրիմներ: Մոսկվայի հայերի պատիվն է, որ այս սուրբ հաստատությունը պանվի ավելի ծաղկյալ և բարգավաճ վիճակում:

Սիրելի՛ ժողովուրդ, ինչպես հայր Պարգևը իր խոսքի մեջ անդրադարձավ, մենք ուրախությամբ մասնակցեցինք խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի համագումարին և մեր խոսքը բերեցինք հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, հանուն Ս. Էջմիածնի և հանուն հայ ժողովրդի: Հայ ժողովուրդը խաղաղության սուրբ գործում, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, պետք է կանգնի պայքարի առաջին գծի վրա, որովհետև հայ ժողովուրդը ավելի կարիք ունի խաղաղության և խաղաղ կյանքի, քան այլ ժողովուրդներ: Արտասահմանի մեր բոլոր եղբայրներն ու քույրերը, մեր եկեղեցին և մեր բոլոր հոգևորականները Մեր գլխավորությամբ ոգեվորված են խաղաղության իդեայներով, որ քրիստոնեության և համամարդկային իդեալն է: Յուրաքանչյուր մարդ, մանավանդ հայ մարդ, որտեղ էլ որ գտնվի, իր տեղից պիտի պաշտպանի խաղաղության դիրքերը:

Սիրելի՛ ժողովուրդ, Մենք վերջացնում ենք Մեր խոսքը, կրկին հայտնելով Մեր ջերմ ողջույններն ու օրհնությունները: Թող Աստված ձեր բոլորը պահե պահպանե քաջառողջությամբ, երկար և խաղաղ օրերով, որպեսզի դուք բոլորդ տեսնեք ձեր բարի նպատակների ու ծրագրերի լիակատար իրականացումը և միշտ երջանիկ ապրեք: Ճիշտ է՝ Էջմիածինը ձեզանից հեռու է, մոտ երեք հազար կիլոմետր: Եթե ոչ ամեն տարի, գոնե մի քանի տարին մեկ անգամ եկեք Ս. Էջմիածին և Հայաստան, որպեսզի միասին ուրախանանք մեր վերածաղկած Մայր Հայրենիքով՝ հավերժական Արարատի փեշերին:

Ողջ լերուք և օրհնյալ բոլորդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Հայրենասիրական ու կրոնաշունչ խոսքի կարոտ այս ժողովուրդը գերագույն լարումով լսում է իր մեծ Հովվապետի պատգամները:

Սուրբ պատարագի վերջավորությանը, աջահամբույրի պահին, Նորին Ս. Օծությունը Ս. Էջմիածնից բերած խաչիկներ բաժանեց ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՊՐ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Երեքշաբթի, հունիսի 2-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, այցելություն տվեց Հայաստանի կառավարության Մոսկվայի մշտական ներկայացուցիչ պր. Մելքումյանին: Ցերեկվա ժամը 12-ին պր. ներկայացուցիչը ընդունում է Վեհափառ Հայրապետին: 45 րոպե տևող սիրալիր խոսակցությունից հետո, հրաժեշտ ենք առնում ու բաժանվում Հայաստանի կառավարության ներկայացուցչից լավագույն տպավորություններով:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Չորեքշաբթի, հունիսի 3-ին, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու եկեղեցական խորհուրդը հրաժեշտի երեկո էր կազմակերպել ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Նույն օրը, երեկոյան ժամը 5-ին, Նորին Սրբությունը բարեհաճեց ընդունել Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի պատվարժան անդամներին և նախագահել եկեղեցական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի համախառն նիստին: Վեհափառ Հայրապետը մանրա-

մասն լսելով եկեղեցական խորհրդի և վերբստուգիչ հանձնաժողովի գործունեության մասին, տվեց իր օրհնությունը խորհրդի այնքան նվիրված և շինարար աշխատանքի համար և համոզմունք հայտնեց, որ առաջիկային է՛լ ավելի կազմակերպված պիտի տեսնի Մոսկվայի հայ գաղութը, որն այնքան փայլուն եկեղեցական և ազգային անցյալ է ունեցել։

Նույն երեկոյան, Նորին Վեհափառության ի պատիվ, ընդունելություն էր կազմակերպել եկեղեցական խորհուրդը։ Սեղանի շուրջը եկեղեցական խորհրդի անդամներից, հոգևորականներից, հավատացյալների ներկայացուցիչներից զատ կային նաև հրավիրյալներ, Մոսկվայի հայ գաղութի մտավորական ներկայացուցիչներ։ Սեղանին նախագահում է Ինքը՝ Նորին Ս. Օծությունը։ Մոսկվայի հոգևոր հովիվ Տ. Պարգև վարդապետը կրկին բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին և առաջարկում է բաժակ բարձրացնել Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը։ Ապա առաջարկվում են կենացներ Մայր Հայրենիքի բարգավաճման և Ս. Էջմիածնի ու Հայոց Հայրապետության անսասանության համար։ Խոսք են առնում Մոսկվայում հայ անվանի բժիշկ Հովհաննես Մնացականյանը, եկեղեցական խորհրդի անդամներ Ռուբեն Սաֆարյանը, Գրիգոր Բախչյանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և շատ ուրիշներ։ Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և շնորհակալություն հայտնում եկեղեցական խորհրդի անդամներին և ներկաներին, օրհնում բոլորին և հորդորում է՛լ ավելի համախմբվել մեր Ս. Եկեղեցու շուրջը։ Նորին Վեհափառությունը, ի հիշատակ այդ հանդիպման, ներկաներին նվիրում է Ս. Էջմիածնի պատկերը։ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է սեղանը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Երեքշաբթի, հունիսի 3-ին, գիշերվա ժամը 10-ին, Մոսկվայի օդանավակայանում ենք։ Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար այնտեղ են եկել եկեղեցական խորհրդի անդամները, հավատացյալների ներկայացուցիչներ՝ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետի գլխավորությամբ։ Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնորհակալություն է հայտնում ներկաներին և օրհնում բոլորին։ Գիշերվա ժամը 11.55-ին օդանավը կտրվում է գետնից։ Հակառակ որ ընդամենը տաս օր է ինչ բացակայում ենք Հայաստանից, բայց և այնպես հարազատ վայրերի կարոտն ենք քաշում և ցանկանում ժամ առաջ տեղ հասնել և վերադառնալ տուն։

Յոթը ժամ հսկա թռչունի թևերով թռչելուց հետո, մեր օդանավը արդեն սավառնում է մեր չքնաղ Հայրենիքի՝ Հայաստանի սրբազան հողի վրա։ Ահա զմրուխտ Սևանը իր մենաստաններով, մեր բարձրաբերձ լեռները ալպիական մարգագետիններով։ Նորին Սրբությանը դիմավորելու համար օդանավակայանում են Մայր Աթոռի միաբանությունը, Երևանի ողջ հոգևոր դասը՝ գլխավորությամբ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի։

Վեհափառ Հայրապետին դիմավորելու է եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Ավտոմեքենաները սուրում են դեպի Ս. Էջմիածին։ Մայր Տաճարի գլխավոր մուտքի առջև Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ» և «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականներով առաջնորդվում է Մայր Տաճար։

Հանուն Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության, գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը բարի գալստյան խոսք է ասում Վեհափառ Հայրապետին և սրտագին շնորհավորում է Նորին Սուրբ Օծությանը՝ խաղաղության Համաշխարհային Մշտական Կոմիտեի կողմից խաղաղության շքանշանով պարգևատրվելու ուրախ առթիվ։ Վեհափառ Հայրապետը, պատասխանելով սրբազան հոր խոսքերին, օրհնում է միաբանությանը և ժողովրդին ու նույն թափորով առաջնորդվում Վեհարան։

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ